



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՅԱՆՔՆԵՐՈՒ ԱՐԵՄՍՏԵԱՆ ԹԵՄԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: Prelacy@aol.com Website: www.westernprelacy.org



ԱԶԳ. ՖԵՐԱՅԵԱՆ ԵՐԿՐԴ. ՎԱՐԺԱՐԱՆԻ Ը. ԿԱՐԳԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ ՈՒՆՏԻ ԵԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ

Վերջին տարիներուն, մեր Թեմի Ազգ. վարժարանները սկսած են զարգացնել բարի ակադեմիական մը. տարուան ընթացքին, որոշ դասարաններ, ընկերակցութեամբ իրենց դաստիարակ ուսուցիչներու, կ'այցելեն Ազգային Առաջնորդարան, կը հիւրընկալուին Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի, միաբան հայրերու եւ պաշտօնէութեան կողմէ եւ աղօթքի պահէ մը ետք, իրենց ձիրքերով հաճելի պահ մը կը բոլորեն «Ազգի Տան» յարկին տակ:

Այս ծիրին մէջ, Ազգ. Ֆերահեան Երկրդ. վարժարանի Ը. կարգի աշակերտները Ուրբաթ, 26 Փետրուարի առաւօտուն այցելեցին ազգային Առաջնորդարան. զանոնք կ'առաջնորդէին իրենց դաստիարակներէն եւ ուսուցիչներէն՝ Տիկնայք Ազատուի Ղազարեան, Սեզա Զիւրտեան եւ Պրն. Րաֆֆի Յակոբեան:

Ազգ. Առաջնորդարան ժամանելով, աշակերտները կարգապահութեամբ ու լրջութեամբ ուղղուեցան «Ս. Տրդատ եւ Ս. Աշխէն» մատուռ. Առաջնորդ Սրբազանն ու Քրիստոնէական Դաստիարակութեան բաժանմունքի գոյգ վարիչները՝ Գերպ. Տ. Միւռն Ծ. Վրդ. Ազնիկեան ու Յոգշ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիմեան դիմաւորեցին աշակերտները. տեղի ունեցաւ Արեւագալի կարճ ժամերգութիւն, ապա, ըրին խոստովանանք ու Ս. Հաղորդութիւն ստացան Առաջնորդ Սրբազանի ձեռամբ:

Նախաճաշի կարճատեւ դադարէ մը ետք, աշակերտները ծանօթացան Ազգ. Առաջնորդարանի բաժանմունքներուն, ապա, դահլիճին մէջ Առաջնորդ Սրբազանին ու հոգեւոր հայրերուն հետ ունեցան կարճատեւ հանդիպում մը, որուն ընթացքին անոնց որոշ ծանօթութիւններ տրուեցան Ազգ. Առաջնորդարանի յարկին ու հովանիին տակ տարուող աշխատանքներուն մասին: Առաջնորդ Սրբազանը այս առիթով նաեւ իրենց յանձնեց յուշանուէրներ:

Աւելի ուշ, հիւրերն ու հիւրընկալները հաւաքուեցան «Տիգրան եւ Չարուհի Տէր Ղազարեան» սրահին մէջ, ուր աշակերտները ներկայացուցին ինքնամբով պատրաստուած գեղարուեստական յայտագիր մը, ցուցադրելով իրենց տաղանդներն ու հայ մշակոյթին հետ հաստատուած կապը. այս իրողութեանց արտայայտութիւններէն էին արտասանութիւններ, կիթարի ու դաշնակի վրայ նուագներ եւ հայկական մենապար մը: Յայտագիրը

վարեցին նոյնիքն աշակերտները, որոնք գոհունակութիւն յայտնեցին այցելութեան ու հիւրընկալման մասին, նշելով, որ այս օրը իրենց համար ուխտագնացութեան օր է ու յիշատակելի պիտի մնայ իրենց հոգիներուն մէջ: Անոնք նաեւ գեղեցիկ նուեր մը պատրաստած էին Առաջնորդ Սրբազանին համար, իրենց ձեռակերտը եղող նկար մը:

Գեղարուեստական յայտագիրի ակարտէն ետք, Հայր Պարթեւ աշակերտներուն խօսեցաւ քրիստոնէական ու քրիստոնէավայել կեանքի մը արժանիքներուն ու բարիքներուն մասին, ապա նաեւ պատասխանեց աշակերտներուն հետաքրքրական հարցումներուն:

Հանդիպումին եզրափակիչ խօսքը արտասանեց Առաջնորդ Սրբազանը. ան նկատել տուաւ, որ այցելութիւնը կը զուգահիշի Մեծ Պահոց շրջանին, խօսեցաւ պահեցողութեան իմաստին ու բարիքներուն մասին եւ մաղթեց, որ մեր բոլոր աշակերտները իրենց կեանքերը կերտեն իբրեւ հաւատացեալ քրիստոնէաներ ու մեր ազգային ժառանգութեանց հաւատարիմ հայրդիներ:

Աւելի քան երկու ժամ տեւած այցելութիւնը վերջ գտաւ «Կիլիկիա» եւ «Մեր Հայրենիք» երգերով: Մեկնումէն առաջ, աշակերտներն ու դաստիարակները Առաջնորդ Սրբազանին ու հոգեւոր հայրերուն հետ յիշատակի լուսանկար մը ունեցան Ազգ. Առաջնորդարանի մուտքին:

FERRAHIAN SCHOOL 8TH GRADE STUDENTS VISIT THE PRELACY

On the morning of Friday, February 26th, 2010, Ferrahian School eighth grade students visited the Prelacy, accompanied by teachers Azadouhi Ghazarian, Seza Kurdian, and Rafi Hagopian.

Upon their arrival the students were escorted to the “St. Dertad and St. Ashkhen” Chapel where the H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelat, led a prayer service and offered Holy Communion. Very Rev. Fathers Muron Aznikian and Barthev Gulumian participated in the service as well.

The students then headed to the “Dikran and Zarouhie Der Ghazarian” Hall for breakfast, followed by a tour of the headquarters during which they were familiarized with the departments and endeavors of the Prelacy. The students also had the opportunity to meet with the Prelate, during which he presented them with mementos.

The students returned to the hall where they performed a cultural program they had prepared consisting of recitations, guitar and piano performances, and dance. The students expressed their thanks and appreciation for the warm welcome and presented the Prelate with a gift they had prepared for this occasion.

Very Rev. Fr. Barthev Gulumian then spoke to them on the principles of our faith and answered the students’ questions.

In his message delivered to the students, the Prelate noted that their visit coincides with Great Lent, and accordingly spoke to them on the meaning and purpose of keeping Lent.

The visit concluded with the collective singing of the Cilician and National anthems.